


1933/



2010.

2001

371.4  
F-TL սպ.

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՐ ՀԵՎԿՐԵՑԵՐԻ, ՄԻԱՅԵՐԻ

Պ. Պ. ԲԼՈՆՍԿԻՑ

# ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑ

ՊՐԱԿ Ա.

Վ.ՈՒՆ Ե „ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԸ“

1008  
36 818

բարգմ. Ա. ԳԱՐԵՎԻ

№ 8

Հրատարակություն Ալեք-պոլի Գավ. Լուսրաժնի  
1923

23

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հարկ կա նկատելու, վոր նոր դպրոցին վերաբերող ձեռնարկներ մեր մանկավարժական գրականության մեջ բոլորովին չկան: Ցեղած հատուկտոր գրքույկները կամ հոդվածները պարբերականներում՝ միանդամայն անբավարար են նոր դպրոցի առաջադրած պրակտիկ խնդիրները լուծելու համար: Արևմտյան Յեվրոպայի կամ Ամերիկայի պայմանների ազգեցության տակ գրված յերկերի վողորմելի փոխադրությունները չեն, վորոնցով պիտի առաջնորդվի աշխատանքի դպրոցի ուսուցիչը սոցիալիստական կարգերում: Այդ յերկների անգամ ամենեն առաջադեմ մանկավարժների (վորոնց հայացքների աղավաղված փշրանքներով և սնվել և մեր ուսուցչությունը) գրվածքները լեցուն են բուրժուական իդեաներով, ուստի և անհարազատ՝ մեր նոր դպրոցական կյանքին:

Այս տեսակետից նաև ոռուս մանկավարժական ամայի զրականության մեջ խիստ արժեքավոր և հանդիսանում Պ. Պ. Բլոնսկու „Աշխատանքի դպրոց“ գրքի հրատարակությունը, վորի թարգմանությունը պլաներով լույս ենք ընծայում:

Թե քաղաքի և թե գյուղի դպրոցին վերա

բերող կոնկրետ նյութեր պարունակող այս դրսվածքը լավագույն ձևոնարկը կլինի մեր ուսուցիչների համար, վորոնքներկաքաղաքական միջավայրում պիտի ջանան հեղինակի սոցիալիստական մտահայեցողությունից բղխած մանկավարժական խնդիրները յուրացնել և կիրառել: Պեստալոցցու,

Կ. Մարքսի, Դյուքի, Շարելմանի ազգեցության տակ հորինած այս յերկի մեջ արտացոլում ե նոր դպրոցական ասպարեզում կատարվող կենդանի աշխատանքի և կոլեկտիվ ստեղծագործության պատկերը, նոր դպրոցի եյությունը լուսաբանող և պրակտիկ աշխատանքից բղխած բազմաթիվ հարցերի պատասխանները ու ցուցմունքներ:

Մանավանդ այս պրակի նյութը մեր ուսուցիչների համար նոր և, ծանր, ուստի և խորհուրդ ենք տալիս ուշադրությամբ կարդալ մի քանի անգամ: II պրակը կարունակի «Աշխատանքի դըպրոցի մանկապարտեզը» (մոտ 60 էջ), III պրակը — «Աշխատանքի դպրոց առաջին աստիճանի» (մոտ 175 էջ), IV պրակը — «Աշխատանքի դպրոց յերկրորդ աստիճանի» (մոտ 175 էջ),

Ս.ԵԲ. պոլի գագ. Էռուսբաժին

Հունիս, 1923 թ.

## Ա.Ռ.Ա.ԶԱ.ԲԱ.Ն

Աշխատանքի նոր դպրոցի ուրվագիծը դեռ աղօտ պատկերանում և առավույան մշուշի մեջ, և նըանք, վորոնք յերջանիկ ելին ժողովրդի աղիառության գիշերը, ամեն հնար գործ են դնում, վոր ժողովրդի ապագա լուսավորության արշալույսը դեռ մշուշի մեջ մարես: Այս գիրքը շատ թերություններ ունի, սակայն հեղինակն իրավունք չուներ շտագ չհրատարակելու, վորովհետեւ ոտ առաջին կոնկրետ գիրքն ե, վոր խոսում ե ուսուական նոր Աշխատանքի դպրոցի մասին:

1916 թվականի վերջին՝ հեղինակն իր հոդվածներից մեկում ուսու հասարակության համարյա թե անիծում եր՝ նըա ունեցած վերաբերմունքի համար դեպի մանկավարժությունն ու դպրոցը: Այժմ հին վնասակար դպրոցն անցյալի բաժին և դարձել: Թող անկատար լինի այս գիրքը, սակայն հեղինակը հույս ունի, վոր գործը միշտ կանդրադառնա ապրող սերունդների վրա:

Այս գրքի մեջ ցոլանում ե Ֆրեքելի, Պետալոցցիի, Մարքսի, Դյուքի և Շարելմանի աղդեցությունը: Բայց հեղինակն ավելի մեծ չափով պարտական ե այն մարդկանց կենդանի

աշխատանքներին, վորոնք աշխատում են դպրոցում։ Այս գրքին ծնունդ տվին լուսավորության գավառային գործիչների հարուցած հարցերը և Մոսկվայի մանկավարժական ժողովները, իվերջո հեղինակն իր սրտանց յերախտագիտությունն և արտահայտում լուսավորության գործին այնքան անձնատուր յեղած մարդուն՝ Լ. Գ. Տերեխովին, վոր իր ցուցմունքներով և խորհուրդներով ողնել ե այս գիրքը նախագծելու և զրելու ժամանակ։

Պ. Շլենսկի

### ՎՈՐՆ Ե „ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՐԱՅՈՅԸ“

Հասարակական հառաջաղի մությունը կախված է նրանից, թե ինչ վիճակում և գտնվում ձարտարարված աշխատանքը (ինքուստրի)։

### 1. Աշխատանքը չեվ աշխատային կրուքունը

Աշխատանքի դպրոցը՝ աշխատային կրթության դպրոց եւ Աշխատային կրթության հյությունը մենք կարող ենք ըմբռնել այն դեպքում, յերբ կանխորեն ողարգենք աշխատանքի հյությունն ընդհանրապես։

Աշխատանքը մի այնպիսի գործողություն է՝ մարդու և ընության մեջ կատարվող, վորի միջոցին մարդը բնությունը յենթարկում է իր կամքին, ստիպելով նրան ծառայել մարդկային պահանջներին։ Այդ գործողության մեջ մարդը հանդիս է զալիս վորպիս մի հյակ, վոր զգում է վորոշ պահանջներ և գործում է՝ այդ պահանջներին բավարարություն տալու համար։ Իսկ ընության իրերն ու յերեսույթները մարդկային գործունեյության ազդեցությամբ ընդունում են զորածածկող արժեքավոր առարկաների ձևեր։ Արտադրողական աշխատանքը մարդկային մի այնպիսի գործունեյություն է, վորը տվյալ առարկաները վերտառում է մարդկության համար ոգտակար առարկաների։

Սյապիսով աշխատային կրթությունը կայանում է նրանում, վոր մանուկը համաշափ և կազմակերպ վարժվի

410,064

10064  
100640

1064  
10

10164  
10

այնպիսի նպատականարմար գործունեյության մեջ, վոր տվյալ առարկաներից ստեղծագործում և մարդկության համար ոգտակար առարկաներ, այսինքն՝ այնպիսի առարկաներ, վորոնք ունին սպառողական արժեքներ: Ստանալով աշխատային կրթություն, մանուկը զարգանում և վորպես մի եյակ, ընդունակ բնությանն ատիպելու, վոր նա ծառայի մարդկային պահանջներին: Աշխատային կրթությունը բնության վրա ափառետողի կրթությունն է:

Սակայն աշխատանքի մեջ ամենից բնորոշը վոչ այնքան աշխատանքի արգյունքներն են, այսինքն՝ առարկաներից ստեղծագործած սպառողական արժեքները, վորքան աշխատանքի գործիքները և յեղանակը: Աշխատանքի մասին խոսել՝ կնշանակե նախ և առաջ խոսել աշխատանքի գործիքների և յեղանակի մասին, և դրանց մեջ և, վոր մենք պետք ե վորոնենք աշխատանքի եյությունն ըմբռնելու բանաբն:

Աշխատանքի պատմության շրջանները վորոշվում են հատկապես նրանով, թե աշխատանքի ինչպիսի գործիքներ կային և ինչպես եյին ոգտվում նրանցով տվյալ դարձում:

Ցեզ այսպես, աշխատային կրթության միջոցին ամենաեկանն ե՝ զարգացնել յերեխայի մեջ ունակություն՝ ոգտվելու աշխատանքի գործիքներով: Մանուկը՝ տիրապետելով այդ գործիքներին, տիրապետում է՝ բնությունը մարդկային պահանջներին հպատակեցնելու միջոցներին: Աշխատային կրթության եյությունն ե՝ զարգացնել աշխատանքի գործիքներով և տեխնիկայով ոգտվելու մանկան կարողությունը:

Այսպես ուրիշն, պարզելով աշխատանքի գործողությունը, մենք դրանով պարզած կլինինք աշխատային կրթության և նպատակը, եյությունը, մեթոդը

(յեղանակը) և իմաստը: Աշխատային կրթության նըսպատակն ե՝ զարգացնել մանուկի մեջ կարօղությունը բնության առարկաներից և յերեխ յիներից ստեղծագործելու մարդկության համար ոգտակար առարկաներ: Աշխատային կրթության եյությունն ե՝ վոր մանուկը տիրապետե աշխատանքի գործիքներին և տեխնիկային: Աշխատային կրթության մեթոդն ե՝ համաշտի և կազմակերպ վարժեցնել յերեխային աշխատային գործունեյության մեջ: Աշխատային կրթության իմաստը՝ կրթել ուժեղ մարդ, վոր տիրապետե բնության վրա իշխելու գործիքներին և ծառայեցնե բնությունը մարդու ոգտին և կարիքներին:

## 2. Կոպերացիան յեզ աժխատանքի գորոցը

Վերցնենք մի վորեկ աշխատանք: Ասաղձագործը շինում և տուն: Այդ աշխատանքը, տուն շինելը, մի մարդու ուժից վեր և ծինության վրա աշխատում են մի քանի ատաղձագործներ: Այդ բոլոր ատաղձագործները կամ միամին կտարարում են միենույն գործը, կամ իրար մեջ բաժանում են միենույն գործի զանազան մոմենտները: Այսպիս են՝ նաև ուրիշ շատ տեսակ աշխատանքներ: Շատ հաճախ աշխատանքը հանգիստնում և հավաքական (կոլեկտիվ) գործունեյություն, աշխատակցություն, համագործակցություն (կոոպերացիա): Սակայն ատաղձագործի աշխատանքը հաջորդական մոմենտներից մեկն և այն բազմահասկ աշխատանքների, վորոնք սկսվել են գեղ անտառում՝ ծառը կտրելիս և շարունակվել են սղոցարանում:

Մյուս կողմից տան շինության վրա աշխատում են վոչ միայն ատաղձագործներ, այլև ներկարարներ, հարկողներ և ուրիշներ: Յեղել և ժամանակ, յերբ

միենույն մարդը կտրում եր ծառը, տաշում եր, շինում եր տուն, ծածկում եր կտուրը և այլն: Իսկ այժմ՝ տուն շինելու համար հարկավոր և միանդամայն տարրեր մասնագետների գործակցությունը: Զարգացած հասարակության մեջ աշխատանքն առնասարտկ հանդիսանում է մասնագետների աշխատակցություն: Առանձին անհատաշխատավորը դառնում է աշխատավոր կուկոտիվի մի մասնիկը:

Ի նկատի առնելով այդ հանգամանքը, մենք կարող ենք ավելի պարզ պատկերացնել մեզ աշխատանքի դպրոցի ելությունը:

Զարգացած հասարակության մեջ կղզիացած անհատական աշխատանքն ավելի շուա վերացականություն և (արսարակցիա): Աշխատային կրթությունն անխուսափելի կերպով յենթազրում և կոլեկտիվ աշխատանք, ուրիշ խռովով՝ աշխատային կոպերացիա: Աշխատանքի դպրոցը մանկական աշխատային կոպերացիա յէ (համագործակցություն):

Աշխատանքի դպրոցի բովանդակությունը պիտի կազմեն վոչ թե վերացական «աշխատային պրոցեսները», այլ ամրողական և կապակցված կոնկրետ արտադրությունը: Աշխատանքի դպրոցը, ինչպես և մարդկային աշխատային կյանքը, ծագում է ամրողական կենսական խնդիրներից, մարդու կենցաղական կոնկրետ պահանջներից, պահանջ բնակարանի, հագնելիքի, սնունդի, անոթների և այլն: Այդ պահանջներին բավարարություն տալու հանգամանքը առաջ է բերում հավաքական աշխատանք:

Այդ կոլեկտիվ աշխատանքը յերեխաներին ստիպում է ընդհանուր նախազնով արդյունաբերել միենայն գործը, կամ ավելի հաճախ՝ միասին բաժանում էն իրանց մեջ այդ գործի գանազան մոմենտները:

Այսպես, հասարակական պահանջներին բավարարություն տալու համար, աշխատանքն իրանց մեջ բաժանելու գործողության մեջ՝ յերեխաները կազմակերպվում են և յերեխան-հյուգենիկներից կազմում են մանկական աշխատային լնկերակցություն: Յերեխաների հավաքական աշխատանքը կազմում է աշխատանքի դպրոցի հիմքը, այդ հավաքական աշխատանքը հենց ինքը դպրոցն է:

Վերջին հաշվում, ամեն մի առանձին անհատ-յերեխայի գործը ընդհանուր կոլեկտիվ գործի միայն մի մասն և կազմում, իսկ ինքը՝ յերեխան, աշխատավոր կոլեկտիվի մի մասնիկը: Դրանով մեկ կողմից ձեռք է բերվում հասարակական դաստիարակություն և աշխատային դիսցիպլին, մյուս կողմից՝ մանուկն ստանում և աշխատային հմտություն, տեխնիքական կերպավամտություն՝ իրան բաժին ընկած աշխատանքի մասնակի տեսակների մեջ, նուրը կատարելության աստիճանին հասցրած աշխատանքի գործիքներով ոգտվելու մաքսիմալ մասնագիտական վարժություն:

Ուրեմն, աշխատային կրթությունը հասարակական աշխատային կրթությունն է: Աշխատանքի դպրոցը մանկական աշխատային կոպերացիա յէ, մանկական աշխատային լնկերությունն, վորը կազմակերպվում է՝ աշխատանքը յերեխաների մեջ բաժանելու ընթացքում՝ ընդհանուր միասնական նպատակին ավելի հաջողությամբ համեստու համար. վոր չափով այդ աշխատային կոլեկտիվը միացած և կոլեկտիվ գործով, նույն չափով աշխատանքի դպրոցը հասարակական կրթության դպրոց է: Ի՞նչ չափով այդ կոլեկտիվի ամեն մի անդամը տեխնիկորեն հմտանում է զանազան աշխատանքների զանազան գործիքներ ոգտագործելու մեջ, նույն չափով աշխատանքի դպրո-

ցը աշխատային գաստիարակության և աշխատային  
կրթության դպրոց եւ.

**Յ. Ճառաւարավեսը (ինդուստրի) յեվ չերիտառաւրգ-  
եւեի աւելատային կրթությունը**

Ճառաւարարիվեստ տակով մենք հասկանում ենք  
արտադրության մեքենական յերանակը, այսինքն՝  
աշխատանքի այնպիսի յեզանակ, որի միջոցին աշ-  
խատանքի ձևոքի գործիքը փախորինվում է մեքեն-  
այով, և այդ մեքենայի շարժիչն ել վոչ թե ամփու-  
րար մարդն և հանդիսանում է, ոչ բնություն ու կամ  
այն ուժը: Ճառաւարարիվեստ, վոր մարդու դերու  
գոյն հաղթանակն է բնության վրա, մեր գործի հաշ-  
մար շատ բնորոշ է:

Մեքենան, մկանացին ուժը գործներով միանուու-  
մայն ամիսորդ, հասր և տալիս թուրակաղմ բանվորնե-  
րին և անշափանառներին աշխատելու վնասներ այդ  
արգեն ցույց և ամել կապիտալիստական արգյունաշ-  
րերության փորձը, այդպիսիների աշխատանքը տեխ-  
նիկորեն միանդամայն հարավոր և արտադրության  
մեքենական յեղանակի միջոցին: Դեռ ամելին, միայն  
ճառաւարարիվեստ աշխատանքը կարող և սովոր  
դառնալ ինտենսիվ և լայն կրթության:

Մեքենական գործի ժամանակ թեև հարկավոր և  
վորոշ շափով պատրաստություն, սուլոյն շնորհիվ  
մեխանիզմի միակերպ ինքնաշարժ (ավտոմատիք) գործ-  
ծունելության, այդ պատրաստության համար այլն  
յերկար ժամանակ չի պահանջվում:

Մեքենական արտադրությունը հարավորա-  
թյուն և տալիս մեկ մեքենա կառավարելու մեջ հըմ-  
անալուց հետո՝ անցնել մի ուրիշ մեքենայի ժամա-

թության: Դրանով ել հենց հսարավոր և զանում  
աշխատային բազմակողմանի կրթությունը:

Սակայն ճառաւարարիվեստ արտադրության սկզբ-  
րանքը կայանում է նրանում, վոր աշխատային  
բարդ գործողությունը մեքենարար և զիտողարար  
վերլուծիվ իր բաղադրիչ տարրերին: Զանազան մե-  
քենաների գիտողությունը կցույց և բերում մեխա-  
նիզմի և շարժումների տարրական հիմնական ձևերը:

Բազմակողմանի ճառաւարարիվեստ գաստիարա-  
կությունը առաջնորդում է դեպի մի շարք տեսական  
ընդհանուրացումներ, առաջնորդում է դեպի ճառաւ-  
արիվեստի տեխնիքայի գիլիտովայությունը, յեթե  
կարելի յե վործ ածել այդ հին անրմինը:

Այդ աշխատային բնորդացումները վոչ այլ  
ինչ են, յեթե վոչ բնական գիտությունների գործա-  
զրությունը կյանքի մեջ: Վոչ մի անգ աշխատանքի  
կազը գիտության հետ այնպիս վարոշակի և ակնայտ  
հանգիս չի պալիս, ինչպիս հատկապիս ճառաւարարիվ-  
եստի մեջ: Ճառաւարարիվեստի տեխնիքայի գիլիտովայու-  
թյունը, ընդհանուրացումները մեղ ուղիղ ճանապարհով  
առաջնորդում են դեպի գիտության սահմանը: Ճառ-  
աւարարիվեստի մեջ տեխնիքական և գիտական կրթու-  
թյունը սերտ կապակցված են:

Յեվ այսպիս, աշխատային բարձրագույն կրթու-  
թյունը՝ ճառաւարարիվեստ կրթությունն և ճառաւ-  
արիվեստ աշխատանքը, վոր տեխնիքորեն մատչելի յե  
յերկարաւարդիներին և անշափանառներին, տալիս ի վոչ  
թե միակողմանի տեխնիքական կրթություն, այլ  
բազմարիվեստյան կրթություն: Ճառաւարիվեստ բաղ-  
մարիվեստյան գորոցը սակագում և բանմոր-ֆիլիտովա  
և նրա առաջ բաց և անում գիտական-տեխնիքական  
ամբողջական կրթության լայնարձակ հեռանկարները:

Ճարտարարվեստը (ինդուստրի), վոր մարդկության գերազույն նվաճումն և բնության տիրապեսության մեջ, միաժամանակ հանդիսանում և նաև գերազույն ուսուցիչը մարդու ամրողջական բազմարժեստյան-զիտական-փիլտրոֆիայական կրթության:

Աշխատային կրթությունն և, վոր պատրաստում և բնության ապագա հզոր տիրապետողին: Աշխատային մանկական կոսկերացիան, այսինքն՝ աշխատանքի տարրական դպրոցը, հիմքն և այդպիսի կրթության մանկական հասակում, իսկ ճարտարարվեստ բազմարժեստյան դպրոցը հետազում այդ հիմքի վրա կառուցանում և XX ճարտարարվեստ դարի յերիտասարդի ժամանակակից աշխատային ճշմարիտ կրթությունը:

#### 4. Կերպական չեզ պրոֆեսիոնալ արենա- տակին դպրոցը

Աշխատանքի դպրոցի մեր սահմանումը բնակդեռ չի բնդունված ընդհանուրի կողմից: Շատ հաճախ աշխատանքի դպրոց առելով հասկացվում և բացառապես ձեռարհեստ աշխատանքի դպրոց: Այդ տեսակ դպրոցը ձեռքի աշխատանքը դարձնում և գլխավոր, յերբեմն մինչև անգամ դպրոցի կենտրոնական առարկան, ոգագում և ձեռքի աշխատանքով նաև վորպես ուսուցման մեթոդ՝ ուրիշ առարկաների ավանդան ժամանակ: Ուսուցանել գլխավորապես ձեռարհեստը և ձեռարհեստի միջոցով ամեն բան-անա սա յէ այդպիսի աշխատանքի դպրոցի նշանաբանը, զրա համար ել մենք այդպիսի դպրոցը կանվանենք արհետային (քոմետայա) աշխատանքի դպրոց:

Արհետային աշխատանքի դպրոցի գաղափարախոսն և կերպենշաները: Նրա կարծիքով, պիտության

մեջ մարդկանց հսկայական մեծամասնությունը զբաղված և զուտ ֆիզիքական աշխատանքի արհետաներով, և այդպիս ևլ կլինի միշտ, վորովհետի ամեն մի մարդկային ընկերակցություն կորիք և զգում անհամեմատ ավելի ֆիզիքական, քան թէ մտավոր աշխատավորների: Բացի զրանից արհետաը հիմքն և կազմում ըուր խսկական արգեստների և զիտությունների: Յեզ վերջապես մանուկի մեջ յերեան ևն գալիս բնազդներ ու հակումներ հատկապես զեպի ֆիզիքական զործունեյություն: Ուրեմն դպրոցը պետք և պատվաստե մտածված, որինակելի, համերաշխ, ազնիվ ձեռարհեստի սովորությունը և զրանով անհամեշտ պատրաստություն տա ապագա արգեստի համար:

Այդ արհետային կրթության հետ հեշտությամբ կազմում և հասարակական բարոյական դաստիարակությունն այն չափով, վոր չափով աշխատանքի նման դպրոցը կազմակերպված կլինի ինքնավար աշխատավոր ընկերակցության վորով: Վերջին հաշվում՝ աշխատանքի դպրոցը նախ և առաջ բնափորության կը ըստ կրթյան դպրոց և, և աշխատանքի դպրոցի իմաստը կայանում և նրանում, վոր գիտական նյութի մինիմումով ցուցադրվին մաքսիմում կարողություններ, ընդունակություններ և աշխատանքի ուրախություն:

Սակայն աշխատանքի այդպիսի արհետային դպրոցը համապատասխան և վոչ թէ ժամանակակից, այլ աշխատանքի հնացած յեղանակին, ըստ վորում մեր դարը մեքենական ճարտարարվեստի դար և և վոչ թէ ձեռարհեստի, կերչենշտեյները պատկերացնում և իրան զանազան համբարությունների զործանոցը և նրա մեջ ապագա գարպետ-արհետավորին, վորպես աշակերտ: Ժամանակակից ճարտարարվեստը և մեքենան խորթ ևն մնացել Մյունիսենի մանկագարդի հա-

մար, վորը վերակազմել և իր դարն աճնցած արհեստավորական գաստիւրակության սիստեմը և չի ըմբռնել թե ինչ կարող և ուսուցանել մեքենան:

Բացի զրանից կասկածելի յե, թե նման արհեստային գպրոցը վարքան կարող է լինել կրթական գպրոց։ Մյուսինք դպրոցների սիստեմում այդ գպրոցը համարվում և վորպես «լրացուցիչ» գպրոց, և դա միանգամայն հասկանալի յե։ Աշխատանքի այդպիսի գրպրոցը հնարավոր և միայն, վորպես լրացուցն կրթական գպրոցի. համբարական սկզբնական կրթությունը չեր հաշավի մարդու գաստիւրակության իդեյալի հետ, զեր մի կողմ թողած, վոր ժամանակակից հասարակության մեջ պրոֆեսիոնալ-արհեստային պատրաստությունը պայմանավորվում և միայն նախընթաց ընդհանուր կրթությամբ, ինչպես վոր ժամանակեալ ըմբռի պատրաստությունը՝ փիզիքական ընդհանուր կրթությամբ։

Գուցե արհեստային ուսումը հնարավոր և, վորպես ընդհանուր և վոչ թե միայն պրոֆեսիոնալ կրթություն։ Այդպիսի հնարավորությունը շատ կասկածելի յե, Արհեստաների բազմությունը բնավ այնպես մատչելի կրթությունը ցուցազրում գործիքների և շարժառությունների տարրական հիմնական ձևերը, ինչպես մեքենաները, և հետեւապես արհեստային գպրոցը անհամեմատ ավելի քիչ պարզ նյութ և տալիս բազմարվեստյան ընդհանրացումների համար։ Յեկ այսպիս, լինի նույն իսկ մանկավարժը չափազանց սրամիտ, բազմարհեստ գպրոցը հազիվ թե կարողանա լինել ուսուղական, մանավանդ յերկրորդ աստիճանում։ Յեկ վերջապես վորեն արհեստ սովորելու համար հարկավոր և ավելի շատ ժամանակ, և այդ պատճառով բազմարհեստյան աշխատային գպրոցը կարող և տալ ավելի խղճուկ

1008  
36478

արդյունքներ, քան թե բազմառարկյան ուսման գպրոցը։ Մի խոսքով, զուտ արհեստային աշխատանքի գպրոցը յերկու յեկք ունի. կամ լավ զրված պրոֆեսիոնալ-համբարական ուսում, կամ անշնորհք, մակերեսային շատ արհեստներ։ Բացի զրանից, արհեստի մեջ տեխնիկայի կազմը գիտության հետ հաճախ լինում և շատ հեռավոր (հակառակ մեքենական ճարտարարվեստի)։ Ծանոթանալով այն գպրոցների ծրագիրներին, վորտեղ գիտական կրթությունը կենարունանում և բացառապես արհեստների շարքը, մուրդ զգում և, վոր ամեն բան չափազանց արհեստական և և շինծու։

Յեկ այսպիս, արհեստային աշխատանքի գպրոցը հաղիվ թե կարողանա լինել կրթական գպրոց բառիս լայն մաքով. ձեռարհեստը մեզ համար խորթ չպետք է լինի, բայց մենք չպետք և հրապուրվենք, տարվենք նրանով։ Մենք մեկնում ենք նրանից և վոչ թե դիմում դիմի նա. ձեռարհեստը լրացնում և, այն ել մասմբ, միայն առաջին աստիճանի գպրոցի ծրագիրը։

Արհեստային գպրոցը չի կարող XX դարի մարդու վերագույն ուսուցիչը լինել և նրան տալ ամբողջական բազմարվեստ-գիտական-փիլիսոփայական կրթություն։ Պետք և այդ նախապաշտումն վերջ դներ։ Զեռարհեստին մենք հակադրում ենք մեքենան և գիտությունը, արհեստին՝ ճարտարարվեստը, պրոֆեսիոնալիզմին-բազմակողմանի գիտական, տեխնիքական ընդհանրացումներ։ Մեր նպատակն և վոչ թե արհեստային գործանոցի ուսուա պատրաստել, այլ մեծամեծ հայտնագործությունների և հեղաշրջումների հրաշալի դարի, շողու և ելեկտրականության գորի արժանավոր ժամանակակից մարդ։

5. Առարձնատին չեվ իլլուստրատիվ գպրոց

Ձեռարձնատին այն տեսակ դպրոցը, ինչպիսին մենք քննության առանք, հիմնված է սխալ կարծիքի վրա, իբր թե ձեռարձնատով պարագելը հիմքն է կազմում ձարտարարվեստ կուլտուրայի դարի կրթության Նման ձեռարձնատը շատ անգամ է յենթարկվել քըն-նության: Դրա համար ել մի շարք մանկավարժներ պնդում են, վոր ձեռարձնատը զգրոցում պետք է ծառայե լոկ միայն փորպես մեթոդ զատարակության և կրթության, ըստ վորում ձեռարձնատը զարգացնում է ճշգրիտ գործոն դիտողականություն, մտքի պարզություն և կարողություն նյութապես արտահայտել զարգարները, մյուս կողմից ել նա զատարակում է կամքը և բնափորության հասարակական-դիմոկրա-տական հատկությունները:

Յելակեա ունենալով այդ մաքերը, շատ մանկա-վարժներ մացնում են ժամանակակից ուսման դպրո-ցի ծրագրի մեջ ձեռարձնատը, փորպես մեթոդ բոլոր առարկաների համար, լինի լեզվի դաս, թե մատեմա-տիկայի, պատմության թե աշխարհագրության, ըլ-նագիտության թե գրականության-բոլոր այդ զանե-րին աշակերտները կառուցանում են, նկարում են, կազմականում են, ամեն կերպ նյութապես պատկերա-վորում են այն բոլորը, ինչ վոր կազմում է իրանց ուսումնասիրության առարկան: Պայմանագործինք անվանել այդպիսի դպրոցը, իլլուստրատիվ գպրոց:

Ի՞նչպես պետք է վերաբերվենք իլլուստրատիվ գպրոցին, Այդ գպրոցը դիտողական ուսուցման զըս-րոցի զարգացման գերազայն աստիճանն է, այն զըս-րոցի, վորը հիմնված է աշակերտի անձնական զդա-յական ըմբռնումների վրա: Իլլուստրատիվ գպրոցը՝

գործոն դիտողականության գպրոց է: Առարկայի ճա-նաչողությունը միացնելով առարկայի կառուցման հետ, նա աշակերտի ըմբռնողությունը հասցնում է փորոշության և պարզության գերազույն աստիճանին, գրգում է նրան զննել, վորոնել, լինել գործոն առար-կայի ճանաչողության մեջ: Մի խոսքով, իլլուստրա-տիվ դպրոցն ունի դիտողական ուսուցման բոլոր առավելությունները գերազույն աստիճանով և այս կողմից նա արժանի յի ամեն տեսակ գովասանքի: Սակայն ժամանակակից զպրոցում դիտողական ուսու-ցումը հասցնել գերազույն աստիճանի կատարելու-թյան, գեռ զա չի նշանակում լավ զպրոց ունենալու խնդիրը լուծել: Դեպի ժամանակակից զպրոցը միը ունեցած բացասական վերաբերմունքը ծագում է վոչ թե միայն նրա մեթոդների թերություններից, այլ ավելի մեծ չափով մեզ չի գոհացնում նրա ներքին կուլտուրական բովանդակությունը, նրա ծրագիրը: Վերջապես, վոր ամենից զլամազոն է, մենք չափազանց անրավական ենք նրա հենց կազմով, վոր ամենայն սիթեեթությամբ իր մեջ միացրել է զպրոց-վանքի, զպրոց-զորանոցի և բյուրոկրատական զպրոցի պատ-մական շերտափորումները: Մենք ժամանակակից զպրո-ցական ամբողջ կազմը գտնում ենք անհամապատաս-խան և ժամանակակից կուլտուրայի վոգուն, և ժո-ղովրդի պահանջներին, և մանուկի նովերանության: Անհրաժեշտ և վոչ թե ժամանակակից զպրոցի ուսուց-ման մեթոդը կատարելագործել, այլ ամրող զպրոցա-կան կազմը բարեփոխել:

Առհասարակ իլլուստրատիվ գպրոցը համարում են հեշտ իրագործելի զպրոց: Սակայն այդպիսի մի նկա-տառում իր հիմքում սխալ ունի, ամեն մի արժանապես անկատարի կատարելագործելու վորձերը մեզ կտանեն,

կմացնեն փակուղի: Ճիշտ իրազործելի յե, իհարկե, յեթե՝  
առանց ձեռք տալու ժամանակակից դպրոցի կազմին  
և նույն իսկ ծրագրին, այժմյան դասերին մացնենք  
միայն ձեռարձեսար, վորպես ուսուցման մեթոդ, այսին-  
քըն՝ կատարելագործենք այժմյան դպրոցի միայն մեթո-  
դը: Բայց այստեղ մի քանի հարցեր են ծագում: — Հնա-  
րավոր և արդյոք նույն իսկ մեթոդը բարեփոխել, պահ-  
պանելով ժամանակակից դպրոցական կազմի հյական  
գծերը: Իլյուստրատիվ դպրոցը, վոր հիմնված և մեթոդի  
կատարելագործության վրա, հնարայում դասատունե-  
րից չի պահանջիլ արդյոք հսկայական մեթոդական  
նորամություն մինչ այն աստիճան, վոր աարքական  
դպրոցում դասարանական սիստեմ այլևս անհնարին  
դառնա: Շահ կունենան արդյոք տարրական դպրոցը,  
յեթե անցնի միմյանց հետ մեքենարար կատված ուս-  
ման առարկաների ուսուցմասիրության սիստեմին՝  
մասնագետ ուսուցիչների զեկավարությամբ, և այն ել  
այնպիսի մի ժամանակ, յերբ ամրողական կրթության  
և դպրոցական դաստիարակության (և վոչ թե միայն  
ուսուցման) միանականության քարոզն և լսում:  
Վարքան իրազործելի յե ընդհանուր կրթությունը  
տարրական դպրոցներում, յերբ զրանք վերածվում են  
զիմնագիտական տիպի դպրոցների: Կտա արդյոք բա-  
վարարություն այլպիսի դպրոցը ներկայի պահանջ-  
ներին: Դպրոցական աշխատավորներն արդյոք շու-  
տով չեն նկատի, վոր զա հին դպրոցն և նորողված:  
Յեվ վերջապես իլյուստրատիվ մեթոդը շատ զեղքե-  
րում նյութական դիտողականությունը անհեթեթու-  
թյան չի հացնում արդյոք:

Համենայն զեպս մենք յերեք չպետք և շփոթենք  
իլյուստրատիվ դպրոցը աշխատանքի դպրոցի հետ  
Յերկու տիսակ դպրոցների մեջ վոչ մի ուղղակի կապ

չկա, և վոչ մի բնական անցում չի կարող լինել իլյուս-  
տրատիվ դպրոցից աշխատանքի դպրոցին:

#### 6. Աշխատանքի յեվ տրաղիցիոն դպրոց

Իսկուկան աշխատանքի դպրոցը միանդամայն և  
վճռապես իր կազմը պետք և խցի ավանդական (տրա-  
ղիցիոն) դպրոցի հետ, վորին առվորարար անվանում  
են ուսման դպրոց (ուսումնաբան): Պարզելով ավան-  
դական դպրոցի ելայթյունը, մենք հակադրության  
մեթոդով կարող ենք ավելի պարզ և վորոշ պատկե-  
րացնել նաև աշխատանքի դպրոցի ելայթյունը:

«Եկոլա» (դպրոց) բառը հունական ծագում անի  
և կնշանակի «պարտպ» (ժամանակ): Գոյրոցի պատ-  
մական տիսությունը սերտ կապված և «պարտպ»-ի և  
աշխատանքի մասին հասկացողության հետ, վոր հիմ-  
նված և հին հունական նորտական անոնեսավարու-  
թյան վրա:

Հները, ինչպես որինակ Արիստոտելը, բացասա-  
րար ելին վերաբերվում ֆիզիքական աշխատանքին և  
արհեստին, և կյանքի թագն ու պսակը, որժանի  
աղատ, ազնիվ մարդուն, համարում ելին պարապ  
կյանքը: Այդ պարապությունը, վայել աղատածին  
քաղաքացուն, հասկացվում եր, վորպես իմացական  
(«տիսական») կյանք, վորը հույն մտածողները գե-  
րազանց ելին համարում արհեստավորի կյանքից և  
նույն իսկ քաղաքական գործունեյությունից, և իսպա-  
տիվ վորի հին մտքի այնպիսի հանճարներ, ինչպես  
Պլատոնը, Արիստոտելը և Պլոտինը, ներողներ ելին  
յերգում:

Այս հիմունքների վրա վերջիվերջո ստեղծվում  
և «աղատ», տիսական դիտությունների ավանդական

գպրոցը, կտրված աշխատանքից և աշխատային կուլտուրայից, և զանում և լսելու, խորհելու և իմանալու դպրոց, բայց վոչ յերրիք գործի դպրոց։ Հին հոգերանությունը մարդկացին հոգու եցությունը, նրա վողին, տեսնում եր մտքի մեջ և հատկապես խոհական մոռքի մեջ։ Զեռարհեստը հարածվում եր, վորպես աղնիվ մարդկանց զավակների համար մի անվայիլ և անարժան զրազմունք։ Առասարակ գործունելությունը, կամքը, բնավորությունը բավարար չափով չելին կրթվում մտքի զաստիարակության այդ դպրուում։ Միտքն եր միայն, վոր անձնատուր եր լինում գերազույն ճշմարտության և գեղեցկության մասին մտածության։ Պարզ յերկում ե, վոր ավանդական դպրոցը հարմարեցված եր անաշխատ զաստիարագերի զաստիարակության համար։

Համարյա մի հազարամյակ յեփոսպական դպրացն եր գոյությունը պահպանեց, վորպես վանական դպրոց՝ եր աստվածաբանական-սիոնաստիք բնուով (բաղաժով), Այդ դպրոցի միմյանց հաջորդող հետագա յերկու շրջաններում (Տրինիութերականություն, հոետորություն և տրամտիոսություն, զածենության ամառանություն, յերկրաչափություն, աստղաբաշխություն, յերածշտություն), յերբ բոլոր ուսմունքների թագն ու պսակը կազմում եր աստվածաբանությունը, մենք նշմարում ենք հոչակավոր յեռյակի (կրոն, մայրենի լեզու, մատեմատիկա) նախանշանները, նոր ժամանակում այդ վանական դպրոցը տեղի տվավ հումանիստների ձեռքով հիմնված գիմնազին, վորի հասարակական-մանկավարժական դերը լավ են վորոշել ուժորմացիայի ժամանակ գերմանական իշխանները, վորոնք համարում եյին, թե այդ դպրոցը հիմնված և զգիտական քարտուղարներ» պատրաստելու համար, իսկ

Թուսաստանի ժողովրդական լուսավորության մինիստրները՝ «ազնվականների և աստիճանավորների» զավակներին զաստիրակելու համար։

Կլասիք զիմնազի ծրագիրը, կազմված մեղանից հեռու զարերում, վորչափով անփափոխ շարունակում և գոյություն ունենալ և հետազայում, նույն չափով զիմնազիական կրթության սիստեմն աշքի յի ընկնում իր չափազանց ավանդապահությամբ, պահպանողականությամբ, և նույն իսկ թշնամի և ժամանակակից կուլտուրայի լեզվի ծրագիրը, վոր պահպանել և սիստեմի դպրոցի քերականական բնույթը, գարձավ հին թիզունների հումանիստական տիպիք ծրագիրը։ Ցիցերոնը, Վիրզիլիոսը, Հոմերոսը և պատմագիրները դարձան պաշտամունքի առարկա։ Մատեմատիկայի ծրագիրը, վորով թվարանությունը վերջանում էր տիխնիքական կանոններով, վոր առերական կապիտալիզմի դարի պահանջն եր, և վորը համեմով «Եվլիլիդյան» յերկրաչափության և յեռանկյունաչափության, քարացավ, պատկերացնում եր մատեմատիքական գիտության վիճակը մինչև Դեկարտի և Լայբնիցի ժամանակները։ Այդպես եյին նաև այն ժամանակված կուլտուրայի հաշակով սազմաքաղաքական պատմությունը, աշխարհագրական զիտելիքները։

Յեթե այս բոլորին մենք ավելացնենք նաև ուսուցման «թղթե» մեթոդը (ձեռնարկ և տետրակ) և ձեւական-բյուրոկրատական զաստիրակության ընդհանուր վոգին, մենք կը բռննենք, թե նման դպրոցը վորպիսի խոր հակասության մեջ և յեղել մեր ժամանակի ճարտարարվեստ կուլտուրայի պահանջների հետ։ Այսպիսի դպրոցի սանը ժամանակակից կյանքում զգում եր նույնպիսի անձարակություն, վորպիսին զգում եր նաև նրան զաստիրակով կղերա-

կան-քզնվապետական-չինովնիկական պետությունը՝ ժամանակակից կյանքի համար հարկավոր չեն գոչ պարապ, լոկ միայն իմացական կյանքի մարդիկ, վոչ, այսպես կոչված, «տեսաբաններ» (տեսրիտիկներ) այնպիսի կրթությամբ, վոր ժամանակակից կուլտուրայից հետ և մնացել մի քանի դար, վոչ ել իշխանների և նմանների. ղեկանատների համար «գիտուն քարտուզարներ»: Ավանդական դպրոցի հիմնական թերությունը այն է, վոր նաև ճարտարարվեստի և գիտությունների, հայտնագործությունների ու զյուտերի այս մեր յեռուն դարում, դործի, աշխատանքի, գործունելության, զեմոկրատիայի մեր այս լարված դարում տալիս և մեզ իսկական վայրենիներ թե մտքով, թե ունակությամբ, տալիս և մարդիկ, վորոնք ընդունակ են միայն խանգարելու պրոդրեալ իրանց մտավոր խզուկ պաշարով և գործնական անձարակությամբ մարդիկ, վորոնք աչքի յեն ընկնում իրանց աղնվապետական արհամարհանքով դեպի ժողովրդական զանգվածը:

7. Ազիտատանքի դպրոցը յեկ տագիցիոն (ավանդական) դպրոցի բարեփոխության օօվորական նախագիծները

Ավանդական դպրոցի ըարեփոխությունը վազուց և հերթական խնդիր դարձել: Բարեփոխության նախագիծները սովորաբար ամփոփում եյին հետեւյալ կետերում. 1. Քերականության փոխարեն ընական գիտությունների և դասական լեզուների փոխարեն նոր ժամանակի գիտելիքներ. 2. Մացնել ծրագրի մեջ ղետողական ուսուցում և ավելի ուժ տալ դասարանի գործոն մասնակցության. 3. Միջնակարգ դպրոցի բարձր դասարանների պոլիֆուրկացիա. 4. Զարկ տալ

թարձրագույն և միջնակարգ մասնագիտական դպրոցների ծագալման:

Հասարակագիտուրին այդ նախադիմությունը հեշտ է բացատրել. ծնունդ առած կապիտալիստուկան ճարտարարվեստը զիտնական քարտուզարների կարիք չուներ, նրան հարկավոր եյին ճարտարապետներ (ինժեներ), տեխնիկներ, վարպետներ, մեքենագետներ (մեխանիկ), քիմիկոններ, գոճառականներ, ագրոնոմներ: Դրա համար ել բացգում եյին բարձրագույն մասնագիտական և պրոֆեսիոնալ դըպրոցներ, կերծին սիպի դպրոցները ճարտարարվեստի համար պատրաստում եյին միջին տեսակի ծառայողներ, յերկրորդները՝ բարձր տեսակի. ճարտարարվեստի բանվորական մասսաների ստորին խավերը կազմում են սև աշխատանքի բանվորները՝ մշակները: Բարձրագույն մասնագիտական դպրոցներն սկսեցին զանգատվել, վոր սովորողները բավարար չափով պատրաստված չեն լինում: Ճարտարարվեստի զարի ապագա գործիչներին նախապատրաստելու առաջին քայլը յեղակ ունական դպրոցների ծնունդը, զիմնագիտական ծրագրի փոփոխությունը և ընական զիտությունների ուսուցումը: Հաջորդ քայլը, վոր ավելի խոր և հիմնական եր, դա զիմնագի պոլիֆուրկացիան եր: Դրացական ծրագրի և զպրոցի առաջ գրված ինսդիրների փոփոխության նաև փոփոխվում եր նաև զպրոցի ուսուցման յեղանակը (զիտողականություն և գործունություն). այդ փոփոխությունների նպատակն եր՝ պատրաստել իրական, ճշմարիտ գործիչներ:

Ուրեմն, մենք աեսնում ենք, վոր դպրոցական բարեփոխության սովորական նախագիծները պայմանավորված են նոր ժամանակի վողով և այդ տեսակետից նրանք թվում են հառաջաղիմական: Ասկայն

այդ նախագիծները խճճում են նույն հակասությունների մեջ, վորոնց մեջ խճճված և կապիտալիստական ճարտարարվեստը:

Կապիտալիստական ինդուստրիան չի տալիս ինդուստրիայի առեղծվածի կատարյալ լուծումն Այդ առեղծվածը դանում է այն հակասությունների մեջ, վոր յերեան են զալիս ձևոքի աշխատանքից ճարտարարվեստին անցնելու մոմենտին ձարտարարվեստը դեմոկրատացնող ամենամեծ ուժն է. Նա, ինչպես առաջ ցուց տվինք, վոչնչացնում է բանվորներին մշտապես վոնե մասնագիտության բեկոնելու անհրաժեշտությունը, վորովհետեւ զործարանի ընդհանուր ընթացքը կախված է վոչ թե բանվորներից, այլ մերենացից. իսկ մեքենայի հետ ծանոթանալը համեմատարար աւրագ և կատարվում: Հենց զրանով ել մեքենական ճարտարարվեստը աշխատանքի խիստ բաժանման անհրաժեշտությունը վերացնում է և զրա հետ միասին վերացնում է նաև տնտեսական ու սոցիալական նվիրագիտությունը: Մեքենան ազատություն և մացնում աշխատանքի ու կուլտուրայի շրջանը: Միայն մեքենական ճարտարարվեստի դարում հնարավոր և միայն գաման հիմնավորապես խոսել II աստիճանի աշխատանքի համաժողովրդային միամսնական դպրոցի մասին և վոչ թե համբարական դպրոցի:

Կապիտալիստական ճարտարարվեստը հակառակ է հավասարության, նա ձգում է պահպանել սոցիալական դիքերենցիալիան և աշխատանքի շերտավորումը: Դրանով են բացատրվում ավանդական դպրոցի բարեփոխության սովորական նախագիծների բոլոր թերությունները:

Կապիտալիստական ճարտարարվեստը մեծագույն չափով հենված և հասարակ բանվորների բանակի

վրա, մի բանակ, վոր իր բազմամարդությամբ միանգամայն անհարկավոր և ճարտարարվեստի համար, բայց շատ հարկավոր արդյունաբերողի համար: Այդ բանակն է, վոր ցման կատարում և մեքենայի պարտականություն: Տալ զրանց ինդուստրիալ և առհասարակ քիչ շատ տանելի կրթություն՝ արդյունաբերողի համար հաշիվ չե: Գրանով արդյունաբերության ծախուսերը կավելանան և շահը կապակասի, առանց վորեւ ոգուտի տվյալ ձեռնարկությանը, վորովհետեւ այդ ձեռնարկության համար վորակյալ բանվորների կարիքն այնքան մեծ չե: Դրա համար ել ընդհանուր կրթության նախագիծները տարրական դպրոցի սահմանից զենք չեն անցնում. միայն տարրական դպրոցըն է, վոր հավակնություն ունի միամսնական դպրոցի կոչման, այն ել վորոշ առարկություններով:

Բայց և այնպես ճարտարարվեստը պահանջում և վորոշ քանակությամբ «ուսուար» բանվորներ. այդ նպատակով ել բացվում են զանազան պրոֆեսիոնալ դպրոցներ. սակայն այդ արհեստագիտական, տեխնիքական, արդյունաբերական և այլ տեսակ դպրոցները նույն իսկ Ամերիկայում և Գերմանիայում շատ ել չեն փայլում իրանց մանկավարժական արդյունքներով:

Նման արհեստային դպրոցների մանկավարժական խեղճությունը, պարզ է, ուրիշ տեսակ ել լինել չեր կարող: Տվյալ մեքենայի և տվյալ ձեռնարկության վորոշ ձյուղին անհրաժեշտ մասնագիտական հմտություն ձեռք բերելու համար՝ ճարտարարվեստի բանվորին կարծ ժամանակ և հարկավոր, և հաղիվ թե զրա համար կարիք լինի բազմամյա դասընթացներով դպրոցի: Իսկ այդ հմտությունը ընդարձակելու և խորացնելու ամեն մի վորձ կապված և գիտական բազմարվեստյան կրթության հետ, վորի մասին արդեն

խոսեցինք: Այդ գեպըումն ել պետք և հրաժարվել «մասնագետից», այսինքն՝ բանվորին ձեռնարկության կամ արդյունաբերության տվյալ ճյուղին ամրացնելուց: Դրանով աշխատանքի բաժանման սկզբունքը, դիմունիցի բաժանման և նվիրապետությունը կիսատվի, մի հանգամանք, վոր կազիտալիստական հարտարկատը չի թույլ տա: Ահա զրա փոխարեն ել մի շարք փորձեր են կատարվում՝ հիմնել նման դպրոցներ հատկապես աշխատանքի բաժանման սկզբունքի վրա: Դրա հետեւնքը լինում է այն, վոր գիտական-բազմարվիստյան կրթությունը փոխարինվում և ուսումնա-արհեստային կրթությամբ: Այսպես, բացվում են տեխնիքական դպրոցներ, վսրտեղ տիրում և ձեռքի աշխատանքը, ինդուստրիալ դպրոցներ՝ արհեստային բնույթով, վործնական դպրոցներ... ահազին ուսումնական-տեսական ծրագրով, աշխատային և դիտողական կրթության մինիմումով: Այդ թեքումը դեպի ձեռարհեստի և արհեստային պրոֆեսիոնալիզմի կողմը շատ բնորոշ և ճարտարարվեստի ժամանակակից տերերի համար, վորոնք ձգտում են հանուն աշխատանքի բաժանման, դիմունիցի համար և նվիրապետության, իսկանդարել ճարտարարվեստի ապագա ընական զարգացումը և նրա անխուսափելի հետեւնք՝ միասնական աշխատանքի կրթական դպրոցի ծնունդը:

Անրավարար վիճակի մեջ և գտնվում նաև կապիտալիստական ճարտարարվեստի բարձր ժառայողների պատրաստության վործը: Յես կասեցի ուղղակի, վոր այդ վործը ողի մեջ և կախված: Նույն իսկ մասնագիտական տեսակետից նա զուրկ է հիմքից: Դրա համար ել բարձրագույն մասնագիտական դպրոցը ձգտում է իրեն յենթարկել միջնակարգ դպրոցը և նրա վրա բարձել ուսանողներին տարրագույն մաս-

նագիտական հմտություններ ու գիտելիքներ մատակարելու գործի գոնե մի մասը, վոր ծանրացած և իր վրա, հակառակ զեպքում բարձրագույն մասնագիտական դպրոցը պիտի կործանի տարրական գործնական սկարագմունքների և միջանկյալ տեխնիքական զրադարձունքների շատության տակ: Բարձրագույն մասնագիտական դպրոցը հիմքից զուրկ է նաև հանրակրթական տեսակետից: այդ բարձրագույն մասնագիտական դպրոցները իրանց հսկայական հանրակրթական ուսման ծրագրով բոլորիս աշքի առաջն են:

Այսպես ուրեմն, մենք տեսնում ենք, վոր ավանդական դպրոցի բարեփոխության սովորական նախագիծները միայն սուռոգատներ են: Սակայն կյանքը շարժում և պահանջում Յեվ այս բոլորի հետեւնքը դպրոցական բարեփոխության կենդանի դիակ հանձնաժողովներ, վորոնք ամենուրեկ իրանց գոյությունը պահում են տասնյակ տարիներով: Այսոր դպրոցական բարեփոխության առեղծվածը զարձել և արդեն քրոնիքական, նման հնացած՝ անհույս հիմնդության: Այդ ջուր ծեծելուն պիտի և վերջ դնել:

#### Տ. Աժիատանեի դպրոցը յեվ մանուկը

Մարդկության առաջազիմությունը մենք տեսնում ենք մարդու հարածուն իշխանության մեջ ընության վրա, զրանով ել կուլտուրայի հառաջաղիմությունը նույնանում և աշխատանքի հառաջաղիմության հետ: Աշխատանքը, համելով իր զարգացման ամենաբարձր աստիճանին, դառնում և ճարտարարվեստ աշխատանքի և աշխատանքի կատարելագույն դպրոցը՝ ինդուստրիալ դպրոցն եւ կրթության նպատակն և մացնել մանուկին ժամանակակից ճարտարարվեստի կուլտուրայի տիրապետության սահմանը:

Բայց այս նպատակը վախճանական նպատակ է, ուրին հասնել կարելի յե միայն յերդասարդական հասակում: Կրթությունը մի գործողություն է (պրոցես) և վորպես այդպիսին, ունի վոչ թե միայն վախճանական նպատակ, այլ և յելակետ: Այդ յելակետը մանուկի բնածին հատկություններն են: Աշխատանքի զբարցի մանկավարժության կենտրոնական (հյական) խնդիրն ե՝ յելնելով մանուկի բնածին հատկություններից, մտցնել նրան ժամանակակից ճարտարարվեստի աիրապետության սահմանը:

Մանուկի բնական կյանքը լի յե խաղով, և խաղըն և մանուկի գերազույն ուսուցիչը: Խաղը մանուկի յեռանդի աննպատակ վատնումը չե: Խաղի մեջ զարգանում է և յերեան և զալիս ամբողջ մանուկը իր ամենախոր հոգեկան առանձնահատկություններով: Խաղերի մեջ զարգանում են մանուկի շարժումների և զգայությունների գործարանները, նրա ուշադրությունն ու յերեակայությունը, սրամությունը և կորովամտությունը, նմանողությունն ու ստեղծագործությունը, սոցիալական գլացումները, որենքներին հըպատակվելը և այլն: Խաղալ՝ մանուկի համար կնշանակե ձեռք բերել փորձ, այն ել այնպիսի փորձ, փոր միացած և գործոն աշխատանքի հետ:

Պարզ և ուրեմն, վոր մանուկի դաստիարակության ժամանակ մենք պետք ե յելակետ ունենանք մանուկի խաղերը, և ամենավագ, այսինքն՝ մինչդրաբոցական դաստիարակությունը պետք ե լինի վոչ այլինչ, յեթե վոչ մանկական խաղերի ոգտագործումն մանկավարժների ձեռքով: Այստեղ հարկավոր և ուշագրություն դարձնել այն հանգամանքի վրա, վոր վաղ մանկության (3—7 տար.) բնական խաղերը սովորաբար ձգտում են վորոշ առարկայական (որյեկտիվ) հե-

տեանքների: Մարդկային գործունեյությունը, վորը ձգտում և վորոշ առարկայական հետեանքների հասնել, կոչվում և զրազմունք: Վաղ մանկության խաղերն, ուրեմն, մանուկի աղատ զրազմունքներն են: Այսպիսով նախաղպրոցական կրթության խնդիրն ե՝ մանկավարժորեն բնարել և մանկավարժորեն նպատականարմար կազմակերպել փոքրիկ յերեխայի աղատ բնական զրազմունքները:

Ուշագրություն պետք ե դարձնել մի հանգամանքի վրա, մանկական խաղերի մեջ մեծ տեղ են զրավում նմանողության ակտերը (գործողությունները), նմանողական խաղերը 3—8 տարեկան յերեխաների մեջ մեծ ժողովրդականություն են վայելում: Այդ հասակի տիպիք նմանողությունը լինում է կամ զրամատիք կամ հորինողական: Մանուկի նմանողությունը լինում է կամ բնազդարար, առանց վորեւ նրապատակի, հենց միայն նմանվելու համար, կամ մանուկը նմանվում է յուրատեսակ, ստեղծագործելով, յուրահատուկ, վոչ ճշտորեն: Առաջին անսակ նմանողությունը, մանուկների ակամա «կապկանալը», վոր հատուկ և մանկան վաղ հասակին, պետք և տարբերել յերկրորդ անսակից՝ կամավոր, գիտակցական նմանողությունից, վոր ավելի ուժեղ և ուշ հասակում:

Հորինողական նմանողության մանկավարժական նշանակությունը ակնհայտնի յե: մանուկը գործնորեն ուսանում է հասարակության ամեն մի սովորույթ, ամեն մի գործ, ամեն մի պրոֆեսիա, ոգտվելով մանկավարժության կարեվորագույն մի որենքով, այն և սովորի անել՝ անելով, վոր միակ ճշմարիտ միջոցն և ըմբռնել սովորելու: Դաստիարակության մեթոդիկայի համար կարեվոր և նկատել, վոր մանուկը զրամատիք նմանողության միջոցին շատ հաճախ ոգտվում

և, փոխանակ իրական առարկաների և գործերի, սիմվոլներով, պատկերներով և որինակներով. «զանազան յերեակայական մտացածին առարկաների ու սիմվոլիք շարժումների սկզբությամբ՝ մանուկը կարողանում է վերաբարդրել ամեն բան՝ սկսած լոկոմոտիվի աղմկալի շարժումներից մինչև մնջկատակի անխօսարձնարը, կամ անցնել հացի միջուկից շինած գնդակների խաղից՝ յեկեղեցու կառուցման»:

Գերե ասածներից մեզ համար պարզվում է նախապարոցական հասակի աշխատային կրթությունը. Այդ կրթությունը կայանում է նրանում, վոր մանուկը (վորի հետաքրքրությունը մինչդպրոցական հասակում չափազանց զարգացած և լինում դեպի շարժումներն ու գործողությունները) զիտե ու զննե ավելի հասակավոր աշխատավոր հասարակության գործողություններն ու զրազումները, և մեքենաների ու մեխանիզմների գործառնություններն ու շարժումները.

Մենք ըոլորս շատ լավ զիտենք, թե ինչպես մասնուկը՝ ժամերով կանգնած, նայում է վառարան շինողի, վորմնաղբի կամ մի այլ արհեստավորի աշխատանքին, թե ինչպես նա արձանացած՝ ուշի ուշով զիտում է մեքենայի շարժումները, վորի մոտից նրան զըժվար և լինում հեռացնել, թե ինչպես նա ջարդում է ինքնաշարժ խաղալիքն այն նպատակով, վոր քանդե և զիտե նրա ներքին մեխանիզմը և վերջապես, թե ինչպես նա, մանուկը, կազմում է զանազան հարմարություններ, հորինում և մեխանիզմներ, վերաբարդում և գործողություններ. Մարդկանց և մեքենաների գործողությունների զննությունը չափազանց առատ նյութ է տալիս յերեխաների անձնական գրադարձների համար, վորոնք տարիներ շարունակ խաղում են շուգեմենա, լոկոմոտիվ, ջրաղաց, սավառնակ, յեր-

կաթուղի և այլն. Յեկ այսպես, մանուկի բնական զբաղմութեաներ՝ մարգկային զբաղմութեաների, մեենաների չեկ մեխանիզմների ու գործողությունների վերաբարդությունն է: Չափազանց կարեոր և այն հանգամանքը, վոր այս ըոլորը զանում է մանուկի հորինողական նմանողության առարկա, ուրիշ խոսքով, մանուկը հորինում է, կազմում է, կառուցանում է, վերաբարդում և ինքնորեն, ստեղծագործելով, վորպես աշխատանքի և տեխնիկայի մեջ նոր ուղիներ հայտնագործող, վորպես հնարող և ստեղծող: Սրանով յիս չեմ ուզում ասել, վոր փոքրիկ մանուկը տեխնիքական նոր գյուտերի և հնարների հայտնագործող է, այլ միայն, յեթե դա միայն է, այն, վոր նա զատիքարակվում է, վորպես հայտնագործող և ստեղծող: Մանկավարժական ահանկետից չափազանց կարեոր և նաև մանուկի ունեցած հակումը դեպի սիմվոլները (նշանակներ). Վրա շնորհիվ նա ըմբռնում է ավալ մեխանիզմի, շարժողության և զբաղմունքի եյությունը, սկզբունքը, այսպիս ասած, իդեյան, և վոչ թե դրանց կոնկրետ յերկրորդական մանրամասնությունները:

Մենք յերկար կանգ առանք և մանրամասն ցույց տվինք, թե նախապարոցական հասակի մանուկները ինչ հարաբերություն պիտի ունենան աշխատանքի գալրոցի նկատմամբ, վորովհետեւ հատկապես հենց այդ հասակն է, վոր, թերեւս, ավելի շատ կանաչների տեղիք առ ընթերցողների կողմից: Ինչ վերաբերում է աշխատանքի տարրական գալրոցին, պետք է ասենք, վոր նրա թե կոնկրետ պատկերացումը և թե նոզերանական հիմնագործումը մեղանից ավելի քիչ խսաք կապահանջին Աշխատանքի տարրական գալրոցը, և աստիճանի գալրոցը կամ պատճեկան աշխատանքի

կապված են լինում մանկական ակտիվ գործունեյության հետ («տուր փորձեմ» մի բան շինեմ զրանով): Դրանով ել սահմանվում է տարրական կրթության բովանդակությունը, այն եւ աշխատանքի գործիքների և յեղանակի սատիճանական կատարելազործությունը՝ աշխատանքի մաքսիմալ արտազրովականության հասնելու համար: Պարզ եւ, վոր ինդիքն այս կերպ դնելով, այլևս ննարավոր չի լինի տնային աշխատանքի շրջանակներում զործող մանկական աշխատային կրպերացիան վերածել արհեստային-տնայնազործական գպրոցի: Գործիքները, առարկաները, աշխատանքի յեղանակը աշխատանքի սահմանից հանում են ու տանում՝ մեկ կողմից գեղի բնական գիտությունները, մյուս կողմից՝ զեղի սոցիալական կուլտուրան, վոր հմանված ե արտազրության միջոցների պրոցեսի վրա:

Ֆարբիկան ու զործարանը-ահա յերիտասարդի աշխատանքի գպրոցը: «Գործարանային աշխատանքը կարող է լինել նույնքան մաքուր, նույնքան լավ դրված, մինչև անգամ ավելի լավ, վորքան տնային աշխատանքը»: Այսուեղ, վորտեղ հաստիկավորները աշխատում են, գեռահասները և յերիտասարդները պետք և սովորեն: Գործարան-դպրոցումն ե, վոր պետք է դաստիրակի բանվոր գիտնականը: Գործարաններն ու ֆարբիկաները մարդկային մտքի՝ ընության վրա տարած գերազույն հաղթանակների շտեմարաններն են: և միայն մարդկային ստոր շահասիրությունն ե, վոր զրանց դարձել և աղբյուր տղիտության, աղքատության և քրտինքի:

Մենք մեքենական ճարտարարվեստին շատ ներբռողներ նվիրեցինք. վերջում մի ներրող ևս ճարտարարվեստը մեծագույն ուսուցիչն և վոչ միայն տեխնիկայի և բնական գիտությունների, միաժամանակ նա

դպրոցը, մեղ պատկերանում ե, վորպես մանկական աշխատանքի կոպերացիա, վոր զարգանում և տնային աշխատանքի շրջանակնում և կազմակերպվում և աշխատանքի բաժանման պրոցեսի ընթացքում՝ ավելի հաջողությամբ հասնելու միանալական ընդհանուր նպատակին, իսկ աշխատանքի այդ բաժանման միջոցին պետք ե, վորքան հնարավոր և, հաշվի առնվիրն մանական աշխատանքի կոլեկտիվի մեջ մասնակցող ամեն մի անդամի համար աշխատանքի բազմազանությունը և նրա փոփոխությունը:

Մանկական աշխատային այդ կոպերացիան, վոր զործում և տնային աշխատանքի շրջանակներում, համապատասխան և պատանեկան հասակի յերեխատների դեպի տնտեսավարությունն ունեցած մեծ հետաքրքրության և մանուկների ընդհանուր զարգացման սատիճանին: Տնային աշխատանք ասելով, մենք հասկանում ենք վոչ թե միայն ընտանիքի տնտեսավարությունը (ԽօՏԱՅԾՏԵՎՈ), այլ և այն ամբողջ աշխատանքը, վոր մատչելի յե մանուկին և մոտ՝ նրա շահերին, վոր չափով այդ աշխատանքը կատարվում է տան համար, դրա հետ հաշված նաև տնային արդյունագործությունը և տնային մեքենաներով կատարվող աշխատանքները: Մեր յելակետն եւ մանկան ձգտումը զետի արտադրողական աշխատանք, կապված տնտեսավարելու սիրո և հետաքրքրության հետ:

Այդ ձգտման հաջողությունը կախված է գործիքներից և աշխատանքի յեղանակից: հարկավոր և այսուեղ նկատել, վոր պատանեկան հասակում յերեխաները չափազանց հետաքրքրվում են հատկապես զործիքներով, տիպիք ե, վոր մանուկների բնորոշումները կործիքական են (իրը բնորոշվում է նրա զործությամբ և զործածությամբ) և այդ բնորոշումները

մեծագույն ուսուցիչն և նաև սոցիալական (հասարակական) կյանքի: Գործարանի կազմակերպող ազդեցությունը և այն սքանչելի հասարակական գառտիրակությունը, վոր գործարանը տալիս և գործարանում աշխատավորին, ամենքին հայտնի յեն: Սակայն ճարտարարվեստը վոչ թե միայն սոցիալական գառտիրակություն և տալիս, այլ և սոցիալական կըրթություն՝ ուսում և այն ել շատ լայն չափով:

Ճարտարարվեստն իր արտազրությունների համաշխարհային փոխանակությամբ առաջնորդում և մեղ ամրող յերկրագունդը ճանաչելու, ամրող մարդկության հետ մոտիկանալու: Միայն մարդն և, վոր մարդուն քենուել և մեքենային, մեքենան ինքը՝ բոլոր այն նյութերով, վոր գալիս մտնում են մեքենայի տակ և ապա գուրս գալիս, մարդկանց ցրում և ամրող յերկրագնդի վրա և նրանց մասնակից անում միջազգային մարդկային կյանքի բազմազան և բարդ յերեսներին: Յեվ այսպես, աշխատային պարագաներում կազմակերպված խաղերը՝ մասունքների համար, անտյին աշխատային կոպերացիան՝ պատանիների և ճարտարարվեստը՝ յերիտասարդների:

#### 9. Ճարտարարվեստ աշխատանիթ գպրոցը՝ Գյուղը յեվ ապագայի պետությունը

Նոր գպրոցը՝ արդյունարերական քաղաքի գավուն և, Հասկա գյուղը: Ի՞նչպես հաղորդակից լինի գյուղը այն բարձրագույն գպրոցին, վորը պատկերացնում և մարդու ուժի հաղթմանակը բընության վրա:

Գյուղն ել, թեև ավելի թույլ չափով, գառնում և ճարտարարվեստի նվաճման առարկա: Այդ նվաճումը

կատարվում է յերկու ճանապարհով. մեկ կողմից գյուղ գերում հիմնվում են ֆարբեկաններ, և դործարաններ, իսկ մյուս կողմից՝ յերկրագործությունը վերածվում է գյուղատնտեսական ճարտարարվեստի, հենված գյուղատնտեսական մեքենանների և գիտական ազրումիայի վրա: Այսպիսով գյուղն ել մտնում և ճարտարարվեստի կուլտուրայի ըրջանը, և հետևազին հնարավոր և գառնում ճարտարարվեստ աշխատանքի զըպրոցը: Արդյունարերական մեծ գյուղերն ու ազրիկուլտուրայի ըրջանները նոր գպրոցի ոջախներ են: Գյուղի ու քաղաքի հակազրությունը ապագայում կհարթվի: Սակայն այժմ ինչ կարելի յի անել յերկրագործական հետամնաց տեղերում, այն գյուղերում, վորտեղ զիռ տիրում և հին գեղջկական կյանքը: Իսկ թվում և, վոր անզրջը հեղեղյան արջի վորջերը հազիկ թե մանկավարժական նպաստավոր միջազգայր կարողանան լինել նոր գպրոցի համար, այդ և պատճառը, վոր յերիտասարդների փախուստին զեսլի կուլտուրական կենտրոններ՝ մենք միայն համակրել կարող ենք: Համենայն զեսլ, այդ հետամնաց անկյունները չեն կարող նոր գպրոցի տնկարաններ լինել մանավանդ նրա բարձրագույն աստիճանների համար:

Նոր գպրոցը գալիս և ճարտարարվեստի կենտրոններից, մայրաքաղաքներից և մեծ քաղաքներից: Քաղաքները, արգյունարերության կենտրոնները հանգիստանում են նաև կենտրոններ մտավոր կուլտուրայի և աղյուր մանկավարժական բարեփոխությունների: Ճարտարարվեստաշխատանքի գպրոցը, քաղաքային կուլտուրայի այդ զափակը, գյուղում գտնում է կուլտուրայի առաջնորդը, պիոնները: Մեր հետամնաց, խուլ գյուղի համար նոր գպրոցը՝ գյուղը ինդուստրիալիզացիայի յենթարկող ազդակներից մեկն և, և զը-

բանում և կայանում նրա քաղաքակրթական նշանակությունը նա մտցնում է գյուղը բարձր կուտարա: Այսպիսով նոր դպրոցը հանդիսանում է յերկրի շարժիչ ուժը, վոր տանում և դեպի ճարտարարվեստի պրոգրեսը: Յեվ այդ մտքով նա հնարավոր և յանկալի ամենուրեք, նույն իսկ գյուղական յիշկրում:

Սակայն ճարտարարվեստ աշխատանքի դպրոցի կատարյալ բարդավաճումը հնարավոր և միայն կատարյալ ինդուստրիալ (ճարտարարվեստ) յերկրում:

Ապագայի պետությունը մեզ պատկերանում և, վորպես տնտեսական-ճարտարարվեստի պետություն, վորի միջոցին հասարակությունը կազմված կլինի արտադրող միավորություններից և վորի «կառավարությունը կլինի տնտեսական ընտրովի վարչություն» Այդ վարչությունը կկազմակերպե հասարակական արդյունաբերությունը, «անձեր կառավարելու փոխարեն» կլինի իրերի ու արտադրության կառավարություն» և հետևապես «ժողովուրդը կարիք կզգա վո՞չ թե կառավարության, այլ վարչության, վոր ավելի պարզ կսահմանե և ավելի խելացի կիմբավորե այն աշխատանքներ, վոր հասարակությունը պիտի կատարե՝ իր բոլոր անդամների ֆիզիքական ու բարոյական բարեկեցության համար»: Պարզ ե՝ այդ ճարտարարվեստ-աշխատանքի ժողովրդական պիտի կատարե՝ վոր «պիտի ժառանգե վոչ թե միայն աշխատանքի գործիքները, վոր ստեղծել և կապիտալիզմը, և գիտությունը, վոր ծնունդ և առնում տեինիկայի հառաջադիմությունից, այլև կոպերատիվ աշխատավորության այն ձևերն ու յեղանակները, վորոնք ժամանակի ընթացքում պիտի սահմանվեն գործարաններում՝ մարդկանց ուժերն ու հմտությունները և ժամանակը հնարեղածի չափ ավելի լավ ոգտագործելու»:

այդ պետության մեջ ճարտարարվեստ-աշխատանքի դպրոցն իր արժանավայել տեղը կդրավե և ամեն կերպ խրախուսանք ու ջատագործություն կվայելու:

Մենք, ներկայի մանկավարժներս, ապագայի մանկավարժների կարտգետներն ենք միայն:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## Ա. ՊՐԱԿԻ

1.	Ցերկու խոսք . . . . .	3 յեր.
2.	Առաջարան հեղինակի . . . . .	5 »
I. Վա՞րե և «աճխատանի գպրոցը»		
1.	Աշխատանք և աշխատային կրթություն . . . . .	7 »
2.	Կոպերացիա և աշխատանքի դպրոց . . . . .	9 »
3.	Ճարտարարվեստ (ինդուստրի) և յերիշտասարդի աշխատային կրթությունը . . . . .	12 »
4.	Կրթական և պրոֆեսիոնալ արհեստային դպրոցը . . . . .	14 »
5.	Աշխատային և իլյուստրատիվ դպրոց . . . . .	18 »
6.	Աշխատանքի և տրադիցիոն դպրոց . . . . .	21 »
7.	Աշխատանքի դպրոցը և արագիցիոն զբուրոցի բարեփոխության սովորական նախագիծները . . . . .	24 »
8.	Աշխատանքի դպրոցը և մանուկը . . . . .	29 »
9.	Ինդուստրիալ աշխատային դպրոցը . . . . .	35 »



